

ՄԱՍԼՈՅ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

**ՎԵՆԵՏԻԿԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՅ ԼԵԶՈՒԻ ԵՒ ՄՇԱԿՈՑԹԻ
ԱՄԱՌՆԱՅԻՆ ԽՏԱՑԵԱԼ ԴԱՍԸՆԹԱՑՔ**

Օգոստոս 2010

Վենետիկի Համալսարանի Հայ Լեզուի եւ Մշակոյթի ամառնային խտացեալ դասընթացքը, գործակցութեամբ Պո-Արաքս Մշակութային Ընկերակցութեան, տեղի պիտի ունենայ Օգոստոս 2-18: Քննութիւնները՝ Օգոստոս 19ին: Ժամանում՝ Յուլիս 31-1 Օգոստոս, մեկնում՝ Օգոստոս 20-21ին:

Դասընթացքը ունի չորս մակարդակ՝ բացարձակ սկսնակներէ մինչեւ յառաջադէմներ: Դասերը տեղի կ'ունենան Երկուշաբթիէն Ուրբաթ, օրը հինգ պահ՝ առաւօտեան: Դասերու ներկայութիւնը ՊԱՏՄԱԴԻԲ Է: Մասնակցութեան համար պահանջուած նուազագոյն տարիքն է 18: Դիմումները պէտք է կատարել ԱՆՁԱՄԲ եւ ԳՐԱԻՈՐ, նշելով միշտ ՀԵՌԱԽՕՄԻ, ՀԵՌԱՊԱՏՃԷՆԻ (Ֆաքս) թիւ մը եւ ԵԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈՍՏԻ (EM) հասցէ մը: Դասընթացքին զուգահեռ տեղի պիտի ունենան մշակութային այլեայլ ձեռնարկներ:

ՓՄՓԱՔՈՂՆԵՐՈՒՆ, կէսօրէ վերջերը, ՁԻՒԲԱՐ ՊԻՏԻ ԱԻԱՆԴՈՒԻՆ նաեւ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՐԵՐՈՒ ՈՒ ԴՈՒԴՈՒԿԻ ԴԱՍԵՐ:

13-15 Օգոստոս թուականներուն պիտի տօնուի պատշաճ շուքով **Դասընթացքին քսանհինգամեակը**: Մանրամասնութիւնները յաջորդաբար պիտի հաղորդուին:

Արձանագրութեան սակն է՝ 700 € կամ համապատասխանը՝ տարարժոյթով ըստ օրուան սակին: Այս գումարին 500 Եւրոյի բաժինը պէտք է վճարուի կանխաւ՝ մինչեւ Յունիսի 30ը: Այս թուականէն վերջ այդ սակը 550 Եւրոյի պիտի բարձրանայ: Արձանագրութեան մնացեալ մասը կը վճարուի ԱՆՊԱՅՄԱՆ ՄՈՒՏՔԻ ՕՐԸ: 10% զեղչ մը կը կատարուի անոնց՝ որոնք նախապէս լաւ արդիւնքով մասնակցած են դասընթացքին, գոնէ երկու անգամ: Նոյն զեղչը կը կատարուի նաեւ միասին յաճախող մօտիկ ազգականներէն մեկուն (ծնողք, քոյր, եղբայր, կողակից): ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԱԿԸ ՈՉ ՄԷԿ ՊԱՐԱԳԱՅԻ ԿԸ ՓՈՒՍՈՒԻ ԵՒ ԿԱՏԱՐՈՒԱԾ ՎՃԱՐՈՒՄԸ ՈՐԵՒԷ ՊԱՏՃԱՌՈՎ ԵՏ ՉԻ ԴԱՐՁՈՒԻՐ:

Ամէն վճարագիր (չէք), որ պէտք է անպայման ԴՐԱՄԱՆԱՅԻՆ եւ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ըլլայ, պէտք է հասցեագրուի միայն՝ ASSOCIAZIONE PADUS-ARAXES եւ որկուրի՝ **Assoc. Padus-Araxes – c/o Univ. Ca' Foscari Venezia, Dip. Studi Eurasiatici – San Polo 2035- 30125 Venezia (Italia)**: Ընդունելի չեն անձնական եւ փոստային չէքերը: Ամէն չէք պէտք է ունենայ դրամատան երաշխիքը եւ յենու բաժնեկից իտալական դրամատան մը: Անոնք որ կը նախընտրեն դրամատանային փոխանցումով (bank transfer) վճարել, պիտի ստանան այս մասին հարկաւոր տեղեկութիւնները (հաշուի թիւ եւլն.): **Դրամատանային բոլոր ծախսերը** դիմողին կը պատկանին: Իսկ **փոստի միջոցով փոխանցումը** պէտք է կատարուի միայն **միջազգային փոխազգիւրներու** միջոցով, որ է՝ **mandat-poste international / international money-order**:

Կ'ընձեռուի բնակութեան հնարաւորութիւն համալսարանական ուսանողատուն մը՝ Վենետիկի պատմական կեդրոնին մէջ, օժտուած՝ խոհանոցային յարմարութիւններով: Յուլիս 31-Օգոստոս 20 ներառեալ, ամբողջ շրջանին համար, բնակութեան սակն է՝ 820 € առանձին սենեակի մէջ, 610 € երկու հոգինոց սենեակի մէջ: Բնակութեան վճարը, տուեալ ժամանակաշրջանի ընթացքին, ենթակայ չէ օրական հաշուարկումի: Ճաշ մը կամ ընթրիք մը, Համալսարանի սեղանատան մէջ, պիտի արժեն 8 €:

Յաւելեալ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ համար հեռապատճենէլ +39.041.2414448 թիւին, կամ ել-գիր մը որկել հետեւեալ հասցէին՝ daniela@padus-araxes.com: Ի հարկին հեռաձայնէլ +39.041.2414448 թիւին, երկուշաբթի եւ հինգշաբթի առաւօտները ժամը 9.30-12.30, " կամ +39.347.4562981 թիւին, երեքշաբթի, չորեքշաբթի " ուրբաթ իրիկունները ժամը 20-22 (ԻՏԱԼԻՈՅ ԺԱՄՈՎ): Լաւ ստուգել երկիրներու միջեւ ժամերու տարբերութիւնը: Բացակայութեան պարագային կրկին փորձել եւ յստակ ու հասկնալի լուր մը թողուլ ընկալուչին՝ նշելով անուն եւ հեռախօսի համար: ԵՐԲԵՔ չհեռաձայնէլ Վենետիկի Համալսարանի գրասենեակներուն: